

ԱՉԴԱՐԱՐ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԲՈՒԷՅԹԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅԻՑ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ

P.O.Box: 8157, Salmiyeh 22052- Kuwait. Tel: 965-25614392, Fax: 965-25638312, e-mail: prelacy@armenianprelacykw.org

ՆՈՐ ՇՐՋԱՆ, Թ. Տարի, Թիւ 388, Ուրբաթ, 09 ՅՈՒՆԻՍ, 2017

ՀԱՅԿԱԿԱՆ

Ռուստամեան. «Կառավարութիւնը Բաւական Լուրջ Քայլեր Կատարած Է»

Իրաքանչիւր պաշտօնեայ ալ գիտէ, որ յաւերժական պաշտօնեայ գոյութիւն չունի. երէկ խորհրդարանին մէջ լրագրողներուն ըսաւ ՀՅԴ Բիւրոյի քաղաքական ներկայացուցիչ, ՀՅԴ խմբակցութեան ղեկավար Արմէն Ռուստամեան՝ անդրադառնալով Շիրակի դաշնակցական մարզպետը մէկ այլ դաշնակցականով փոխարինելու հարցին: «Կուսակցութիւնը կրնայ որոշել, թէ ո՞ր անձը ուր պէտք է աշխատի: Ոչ մէկ արտառոց բան կատարուած է այդտեղ», ըսաւ ան:



Անդրադառնալով կառավարութեան եւ վարչապետին մասին հարցերուն՝ Ռուստամեան ըսաւ, թէ չի կրնար խօսիլ այն մասին, թէ ո՞վ պիտի ըլլայ վարչապետ 5 տարի ետք, կամ՝ արդեօք Կարէն Կարապետեանը պիտի ըլլա՞յ վարչապետ եւս 5 տարի:

Արձագանգելով այն դիտարկումին, որ նախագահ Սերժ Սարգսեան կ'ըսէ, թէ վարչապետը պիտի շարունակէ պաշտօնավարել, եւ պատճառ չկայ, որ ան հրաժարական տայ, պատգամաւորը ըսաւ. «Մենք կը խօսինք այս կառավարութեան մասին: 5 տարի ետք ի՞նչ կ'ըլլայ, յայտնի չէ»:

Պատասխանելով այն հարցումին, թէ այս քանի մը ամիսներուն ընթացքին շօշափելի արդիւնքներ տեսած է, որ իրենց ուժն ալ վստահութեան քուէ կու տայ գործող կառավարութեան, Ռուստամեան ըսաւ. «Կառավարութեան փոխարէն հաշուետուութիւն չեմ կրնար տալ, բայց կառավարութիւնը բաւական լուրջ քայլեր կատարած է: Վստահաբար, մենք ատիկա տեսած ենք: Եթէ չտեսնէինք, ինչու համաձայնական կառավարութիւն պիտի կազմէինք»:

Ըստ Ռուստամեանի, քանի մը վայրկեաններու մէջ կարելի չէ ներկայացնել, թէ ի՞նչ եղած են այդ փոփոխութիւնները:

Թէ որո՞ւ կը տեսնէ վարչապետի պաշտօնին 2018-էն ետք, Ռուստամեան պատասխանեց. «Կու գայ 2018 թուականը, կը տեսնենք»:

Դաշնակցական պատգամաւորը ընդգծեց նաեւ, որ իրենց մատնանշած կարգ մը խնդիրները կառավարութիւնը լուծած է, եւ իրենք վստահութեան քուէ տալու առիթ ունին:

www.aztarar.com

Քոնկրետը Կը Դատապարտէ Էրտողանի Բռնարարքները

Ամերիկայի Հայ դատի յանձնախումբը կը տեղեկացնէ, թէ Ուաշինկթընի մէջ խաղաղ ցուցարարներու վրայ՝ Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողանի հրահանգով եւ անոր թիկնապահներուն կողմէ առաջնորդուած վայրագ յարձակումը դատապարտող թիւ 354 բանաձեւը Քոնկրետը միաձայնութեամբ (397 թեր եւ 0 դէմ քուէով) վաւերացուց:

Յիշեցնենք, որ բանաձեւը Ներկայացուցիչներու տան արտաքին յարաբերութեանց յանձնախումբին կողմէ 25 մայիսին միաձայնութեամբ վաւերացուած էր:

Յարձակումը դատապարտելու եւ զայն կատարողները պատասխանատուութեան կանչելու համար պատրաստուած թիւ 354 բանաձեւը ներկայացուած էր արտաքին յարաբերութեանց յանձնախումբի ատենապետ Էտ Ռոյսի եւ նոյն յանձնախումբի բարձրաստիճան անդամ Էլիըթ Էնկըլի կողմէ, Ներկայացուցիչներու տան մեծամասնութեան ղեկավար Քեւրն Սըքթարթիի եւ դեմոկրատական ղեկավարներէն Սթենի Հոյրրի աջակցութեամբ:

Ներկայացուցիչներու տան լիագումար նիստը 6 յունիսին քննեց այս բանաձեւը:

Ամերիկայի Հայ դատի յանձնախումբի գործադիր վարիչ Արամ Համբարեան իր կարգին ողջունեց բանաձեւին քննարկումը Ներկայացուցիչներու տան լիագումար նիստին կողմէ եւ կոչ ուղղեց կառավարութեան, որ դիմէ հաստատ քայլերու, ինչպիսիք են՝ Թուրքիոյ դեսպանի արտաքսումը եւ Թուրքիոյ խոստացուած զենքերու վաճառքին կասեցումը:

Բանաձեւին մէջ կը շեշտուի, թէ խաղաղ ցուցարարներու վրայ կատարուած այս յարձակումը ոտնակոխում մըն է ամերիկեան սկզբունքներուն եւ Միացեալ Նահանգներու քաղաքացիներու իրաւանց: Հոն նաեւ կը քննադատուի այն իրողութիւնը, որ ամերիկացի քաղաքացիներ ծեծած երկու թուրք թիկնապահները, կարճ ժամանակով ձերբակալուելէ ետք՝ ազատ արձակուած են, անոնց դիւանագիտական անձեռնմխելիութեան պատճառով, հակառակ անոր որ արտաքին գործոց նախարարութիւնը կրնար անոնց անձեռնմխելիութիւնը քաշելու պահանջ ներկայացնել Անգարայի իշխանութիւններուն՝ նկատի ունենալով անոնց կատարած բռնարարքներուն տարողութիւնը:

Նաեւ, բանաձեւին մէջ կը շեշտուի, թէ ասիկա Էրտողանի թիկնապահներուն կողմէ արձանագրուած առնուագն երրորդ վայրագ միջադէպն է Միացեալ Նահանգներու մէջ, ու կը պահանջուի պաշտօնապէս ամբաստանել եւ դատապարտել բոլոր թիկնապահները, որոնք խախտած են ամերիկեան օրէնքները:

«Այսօրուան քուէարկութեամբ, Քոնկրետը սկսաւ Ուաշինկթընը ձերբազատել Անգարայի բռնագաւթումէն», ըսաւ Արամ Համբարեան:

«Անընդհատ Անգարային քմայքներուն ընդառաջելէ, Յեղասպանութեան արհաւիրքներուն, Թուրքիոյ տարածքին ու անկէ դուրս, արտասահմանի մէջ անոր բիրտ վարքագիծին նկատմամբ կոյր ձեւանալէ ետք, Միացեալ Նահանգները, սկսելով Ներկայացուցիչներու տունէն, անկիւնադարձ մը արձանագրեց այսօր՝ դիմադարձելով Թուրքիոյ բրտութիւններուն եւ յարաճուն հակաամերիկեան վարքագիծին», աւելցուց Ամերիկայի Հայ դատի յանձնախումբի Ուաշինկթընի գրասենեակի վարիչ տնօրէն Արամ Համբարեան:

«Միացեալ Նահանգներ Յանձնառու Կը Մնան Լեռնային Ղարաբաղի Տագնապի Խաղաղ Լուծման» Կ'ըսէ Թիլըրսըն

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութիւնը հրապարակած է Ազրպէյճանի Հանրապետութեան օրուան առիթով արտաքին գործոց նախարար Ռեքս Թիլըրսընի շնորհաւորական ուղերձը, որուն մէջ ան կ'անդրադառնայ նաեւ Լեռնային Ղարաբաղի տագնապին:

Ուղերձին մէջ կը նշուի, որ երկու երկիրները սերտ գործընկերութիւն ունին՝ «հիմնուած ուժանիւթի եւ անվտանգութեան հարցերով երկար տարիներէ ի վեր տարուող համագործակցութեան, ինչպէս նաեւ ժողովրդավարական սկզբունքներու վերաբերեալ երկխօսութեան վրայ»:

«Միացեալ Նահանգներ կը խրախուսեն ջանքերը կառուցելու աւելի անվտանգ եւ բարգաւաճ երկիր մը, որ կը յարգէ իր ժողովուրդին հիմնարար ազատութիւնները: Մենք նաեւ յանձնառու կը մնանք Լեռնային Ղարաբաղի տագնապի խաղաղ լուծման», ըսուած է ուղերձին մէջ:

Նախագահ Սարգսեան Յանձնարարականներ Տուած Է Արծուիկ Մինասեանին

Հանրապետութեան նախագահին հետ աշխատանքային հանդիպումի մը ընթացքին բնապահպանութեան նախարար Արծուիկ Մինասեան երկէ զեկուցած է բնապահպանութեան մարզին մէջ իրականացուող բարեփոխումներուն, ընթացիկ ծրագիրներուն եւ անոնց լուծման կարելիութիւններուն մասին:

Նախարար Արծուիկ Մինասեան նախագահին զեկուցած է բնական պաշարներու ելակէտային տուեալներու ամբողջական հաշուառման համակարգի ձեւաւորման համար ժամանակակից արհեստագիտական լուծումներ տալու, բնապահպանական փորձաքննութեան հիմնարկի կատարելագործման, գործող թոյլտուութիւններու եւ արտօնագիրներու ընթացակարգերու պարզեցման նպատակով ելեկտրոնային համակարգ ստեղծելու վերաբերեալ:

Հանրապետութեան նախագահը յանձնարարած է աշխատանքներ սկսիլ միասնական անտառային կառավարման համակարգի ստեղծման ուղղութեամբ եւ ներկայացուցած «Դիլիջան» ազգային զբօսավայրի երեք վտանգուած մասնաճիւղերու պահպանութիւնը մասնաւոր պահնորդական կազմակերպութեան պատուիրակելու փորձական ծրագիրը: Նախարար Մինասեան զեկուցած է նաեւ կենսաբազմազանութեան անձնագրաւորման, բնական զբօսաշրջութեան ներուժի արդիւնաւէտ օգտագործման, բնապահպանական եւ բնօգտագործման վճարներու քաղաքականութեան վերանայման ուղղութեամբ նախարարութեան ձեռնարկած քայլերը:

Հանրապետութեան նախագահը յանձնարարած է նախարարին աշխուժացնել աշխատանքները բնութիւն-արտաքին պարտք մեքանիզմի գործադրման ուղղութեամբ, որ կարելիութիւն կու տայ Հայաստանի երկկողմանի վարկային պարտաւորութիւններէն որոշակի միջոցներ ուղղել Հայաստանի բնապահպանական հարցերու լուծման: Նախագահ Սարգսեան նախարարին հետ քննարկած է Սեւանայ լիճի պահպանութեան եւ «բնական միջավայրի» համակարգի վերականգնման ձեռնարկելու վերաբերող հարցերը, տուած է համապատասխան յանձնարարականներ: Բնապահպանութեան նախարարը զեկուցումին ընթացքին ներկայացուցած է «Սեւան» ազգային զբօսավայրը կենսոլորտային արգելավայրի վերածելու հեռանկարային ծրագիրը: Հանրապետութեան նախագահին ներկայացուած է նաեւ նախարարութեան կառուցուածքային եւ քատրային բարեփոխումներու անհրաժեշտութիւնը:

ԼՈՒՐԵՐ ԱՆԹԻԼԻԱՍԷՆ

**ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐ
ՀՈՎԱՆԱԻՈՐՈՒԹԵԱՄԲ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ**

Ընդառաջելով Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի թելադրության, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային Կեդրոնական Վարչութեան Կրօնական Ժողովը իր վերջին նիստին որոշած էր երիտասարդական համագումարներ կազմակերպել՝ շրջանային մակարդակի վրայ: Սոյն մօտեցումը որդեգրուած էր, որպէսզի երիտասարդական համագումարները հեռու մնան ընդհանրացումներէ եւ մասնակիցները առիթ ունենան արտայայտուելու զիրենք յուզող հարցերուն, ինչպէս նաեւ իրենց շրջաններուն առնչուած մտահոգութիւններուն մասին:

Մեկնելով յիշեալ որոշումէն յառաջիկայ Յուլիս եւ Օգոստոս ամիսներու ընթացքին երեք շրջանային երիտասարդական համագումարներ տեղի պիտի ունենան.-

- Ա) Անթիլիասի Մայրավանքին մէջ, մասնակցութեամբ Լիբանանի, Սուրիոյ, Կիպրոսի, Յունաստանի, Քուէթի, Պահլէյնի, Ապու Տապիի, Տուպայի, Շարժայի եւ Քաթարի շրջաններէն եկող երիտասարդներուն:
- Բ) Գանատայի մէջ, մասնակցութեամբ Գանատայի, Արեւելեան ու Արեւմտեան Ամերիկայի եւ Վենզուէլայի շրջաններէն եկող երիտասարդներուն:
- Գ) Թեհրանի մէջ, մասնակցութեամբ Թեհրանի, Իսֆահանի եւ Ատրպատականի թեմերէն եկող երիտասարդներուն:



Յայտնենք, որ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս, ինչպէս նաեւ վերջին Ազգային Ընդհանուր Ժողովը, Մայիս 2013-ին յատուկ կերպով շեշտած էին մեր երիտասարդութեան առաջնահերթ կարեւորութիւն տալու հրամայականը, զանոնք ներարկելով մեր եկեղեցւոյ ու ազգային կեանքէն ներս: Նաեւ յայտնենք, որ 2009 թուականը Վեհափառ Հայրապետը «Երիտասարդութեան Տարի» հռչակած էր այս առիթով իր հայրապետական պատգամը ուղղած էր երիտասարդութեան:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը 2004 թուականէն ի վեր երիտասարդական հարցերու յատուկ բաժանմունք մը ունի, իր վարիչ միաբան հայրով եւ երիտասարդներէ բաղկացած յանձնախումբով եւ ուղղեգիծով: Նոյնպէս մեր թեմերը, իրենց ներքին պայմաններուն եւ դրուածքին համեմատ ունին իրենց երիտասարդական բաժանմունքները: Վերջապէս, մեր Ս. Աթոռին հովանաւորութեամբ, մեր երիտասարդները իրենց գործօն մասնակցութիւնը կը բերեն միջ-եկեղեցական եւ միջ-կրօնական հանդիպումներուն ու համագումարներուն:

**ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԲԱԺԱՆՍՈՒՆԸ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ**

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

Իրանի Խորհրդարանի Շէնքին Եւ Խումէյնիի Դամբարանին Դէմ Ահաբեկչական Ցարձակումներ

Թեհրանի մէջ իրանեան խորհրդարանին եւ իսլամական հանրապետութեան հիմնադիր այաթոլլա Խումէյնիի դամբարանին դէմ միաժամանակ երկու յարձակումներու պատճառով արձանագրուեցաւ 12 զոհ եւ շուրջ 40 վիրատու:

Խորհրդարանին դէմ յարձակում գործող զինեալները մուտք գործեցին երեսփոխաններու այցելուներուն յատկացուած դռնէն, ուր բախում ունեցան պահակի մը հետ, որ սպաննուեցաւ, ապա փորձեցին մուտք գործել խորհրդարանի շէնք, սակայն շէնքի անվտանգութեան ուժերը ետ մղեցին զիրենք եւ ստիպեցին, որ բարձրանան վերի յարկերը, ուր անոնք պաշտօնեաներու վրայ կրակ բացին:



Նոյն պահուն յարձակում մը տեղի ունեցաւ հարաւային Թեհրանի մէջ այաթոլլա Խումէյնիի դամբարանին մօտ, ուր յարձակում գործող երկու զինեալներն ալ սպաննուեցան: Շուրջ երկու ժամ տեւած հրացանաձգութիւններէ ետք, երկրին իշխանութիւնները յայտնեցին, որ երկու դէպքերն ալ վերջ գտած են, իսկ յարձակում գործողները՝ սպաննուած: Իրանեան իշխանութիւնները յայտնեցին, որ կանխարգիլած են նաեւ երրորդ յարձակում մը:

ՏԱՀԵՇ ստանձնեց յարձակումին պատասխանատուութիւնը եւ Իրանի մէջ յաւելեալ յարձակումներ խոստացաւ:

Իրանի Յեղափոխական պահակագունդը յայտնեց, որ յարձակումին ետին կը կանգնին Սէուտական Արաբիան ու Միացեալ Նահանգները: Սակայն Սէուտական Արաբիոյ արտաքին գործոց նախարար Ատել Ժուպէյր յայտնեց, որ յարձակումներուն սէուտցի ծայրայեղականներու մեղսակցութեան վերաբերեալ փաստ գոյութիւն չունի՝ աւելցնելով, որ իր երկիրը կը դատապարտէ ահաբեկչական յարձակումները, ուր որ ալ պատահին անոնք:

Իրանի նախագահ Հասան Ռուհանի յայտնեց, որ Իրանի պատգամը հետեւեալն է. «Ահաբեկչութիւնը համաշխարհային խնդիր մըն է»: Ան կոչ ուղղեց «շրջանային ու միջազգային համագործակցութեան եւ միասնականութեան»: Ռուհանի նաեւ ըսաւ. «Թեհրանի մէջ յարձակումները մեզ պիտի դարձնեն աւելի միասնական եւ ահաբեկչութեան դէմ պայքարին մէջ աւելի վճռական»:

Իրանի գերագոյն հոգեւոր պետ այաթոլլա Ալի Խամենէի յայտնեց, որ յարձակումները երկրին վրայ «պիտի չազդեն»:

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութիւնը դատապարտեց յարձակումը՝ ըսելով. «Ահաբեկչութեան ապականութիւնը խաղաղ քաղաքակիրթ աշխարհի մը մէջ տեղ չունի»:

www.aztagdaily.com

**Անգարա Ճիշդ Չի Նկատեր Քաթարի Դեմ
Պատժամիջոցներու Հաստատումը**
**«Թուրքիա Պիտի Շարունակէ Քաթարի Հետ Յարաբերութիւններ
Զարգացնել»**

Կ'ըսէ Էրտողան

ԹԱՍՍ լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, որ Թուրքիա պիտի շարունակէ Քաթարի հետ յարաբերութիւններ զարգացնել: Այս մասին յայտնած է Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողան:

Ըստ Էրտողանի, Անգարա ճիշդ չի նկատեր Քաթարի դեմ պատժամիջոցներ կիրարկելու որոշումը: Ան աջակցած է ստեղծուած կացութեան մէջ Քաթարի դիրքորոշումին՝ աւելցնելով, որ Թուրքիա պիտի գործադրէ բոլոր ջանքերը, որ ներկայ դրութիւնը կարելի եղածին չափ արագ կարգաւորուի երկխօսութեան ճամբով:

Յիշեցնենք, որ Սէուտական Արաբիան, Եգիպտոսը, Արաբական Միացեալ Էմիրութիւնները, Եմէնը, Լիպիան, Մալտիւեան կղզիները, Մորիսիոսը եւ Պահրէյնը խզած են Քաթարի հետ իրենց դիւանագիտական կապերը:

«Քաթար կ'աջակցի բազմաթիւ ահաբեկչական եւ ծայրայեղական խմբաւորումներու, որոնց նպատակը շրջանային կայունութեան խախտումն է: Այդ երկիրը իր լրատուամիջոցներուն ճամբով անընդհատ կ'իրականացնէ այդ խմբաւորումներու գաղափարախօսութեան քարոզչութիւնը», նշուած է սէուտական լրատու գործակալութեան հրապարակած յայտարարութեան մէջ:

Քաթարեան աղբիւրներ երկէ «Ռոյթըրզ»-ին յայտնեցին, որ իշխանութիւնները սննդեղէնի ապահովման համար բանակցութիւններու սկսած են Թուրքիոյ եւ Իրանի հետ:

**Թանաֆի Մէջ Իր Դաշնակիցներուն Դեմ Ամերիկեան
Հարուածէն Ետք. Սուրիական Բանակը Կը Զգուշացնէ
Ամերիկեան Մագլցողական Քայլերու Հետեւանքներէն**

Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարարութիւնը յայտարարեց, որ ամերիկեան ղեկավարութեամբ Միջազգային դաշինքի օդուժը Թանաֆի լարուածութեան մեղմացման գօտիին մէջ հարուածած է սուրիական կառավարամէտ ուժեր: Սպիտակ տունը իր կարգին յայտնեց, որ Միացեալ Նահանգներու նախագահ Տանըլտ Թրամփ տեղեակ է օդային հարուածէն:

Ռուս ծերակուտական մը յայտնեց, որ իր երկիրը ամերիկեան օդային հարուածի հարցին պատճառով ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդի նիստ պիտի պահանջէ, որովհետեւ ամերիկեան քայլը «նախայարձակական արարք» է՝ աւելցնելով, որ ոչ մէկ բան կը վտանգէ Սուրիոյ մէջ ռուսական ուժերը, որովհետեւ «Էս-300» եւ «Էս-400» համակարգերը զանոնք կը պաշտպանեն:

Սուրիական բանակի հրամանատարությունը զգուշացուց այս մագլցումին վտանգներն ու հետևանքներն եւ Միջազգային դաշինքին կոչ ուղղեց՝ որեւէ պատրուակի տակ այսպիսի թշնամական արարքներ կատարելէ դադրելու:

Հրամանատարությունը յայտնեց, որ սուրիական բանակն ու անոր դաշնակիցները վճռական են շարունակելու ահաբեկչական խմբաւորումներուն, մասնաւորաբար ՏԱՀԵՇ-ի ու Ժապիաթ Նուսրայի դէմ պայքարը եւ զանոնք սուրիական բոլոր հողամասերուն վրայ հետապնդելու:

Զարիֆ Թուրքիայէն Կը Պատասխանէ Թրամփին. «Թեհրանի Մէջ Կատարուած Յարձակումներուն Հակազդեցութիւնը Գարշելի Է»

Իրանի արտաքին գործոց նախարար Մոհամէտ Ճաւադ Զարիֆ Միացեալ Նահանգներու նախագահ Տանըլտ Թրամփին հակադարձելով յայտնեց, որ վերջինիս Թեհրանի մէջ կատարուած յարձակումներուն հակազդեցութիւնը «գարշելի» է: Այս մասին կը հաղորդէ «Մայաստին»:



Զարիֆ «Թուիթթըր»-ի վրայ գրեց. «Սպիտակ տան գարշելի յայտարարութիւն... իրանցի ժողովուրդը կը մերժէ ամերիկեան բարեկամութեան այս պնդումը»:

«Ահաբեկչութեան աջակցողները ժողովրդավարութեան նստավայրին դէմ յարձակում գործած իրենց վարձկաններուն ճամբով կը սպառնան ճակատամարտը փոխադրել Իրան», աւելցուց ան: Ան ըսաւ, որ Թեհրանի մէջ տեղի ունեցած ահաբեկչական դէպքերը «պիտի զօրացնեն ահաբեկչութեան վտանգին դէմ պայքարելու իրանցի ժողովուրդին ու զինեալ ուժերուն կամբը»:

Թրամփ չորեքշաբթի օր Թեհրանի մէջ կատարուած յարձակումներուն վերաբերեալ յայտարարութիւն մը հրապարակելով նշած էր, թէ «անոնք, որոնք ահաբեկչութեան կ'աջակցին, իրենք զիրենք անոր գոհերը ըլլալու վտանգին կ'ենթարկեն»՝ աւելցնելով. «Կ'աղօթեմ իրանցի ժողովուրդին եւ անմեղ զոհերուն համար»:

«Մայաստին» կը նշէ, որ Իրանի արտաքին գործոց նախարարը վերոնշեալ գրառումը կատարեց չորեքշաբթի օր Անգարայի մէջ՝ Թուրքիոյ նախագահին հետ ունեցած իր հանդիպումէն ետք, որուն ընթացքին երկու կողմերը քննարկած էին հասարակաց հետաքրքրութիւն ներկայացնող հարցեր:

Զարիֆ Թուրքիա հասնելէ ետք յայտարարած էր, որ Էրտողանի եւ իր թուրք պաշտօնակից Մելուք Չաուշօղլուի հետ պիտի քննարկէ երկկողմանի հարցեր, շրջանային զարգացումները, ներառեալ՝ Սուրիոյ տագնապը, ինչպէս նաեւ շրջանին վերաբերող մնացեալ հարցերը: Ան Միջին Արեւելքի հարցերը նկատեց «մտահոգիչ»:

Զարիֆ ըսաւ, որ այդ հարցերուն շուրջ իրանցի եւ թուրք ղեկավարներուն միջեւ սերտ երկխօսութեան կարիքը կայ՝ նշելով. «Շրջանին մէջ արձանագրուող ահաբեկչական դէպքերը անոնց դիմակայման համար լիարժէք համագործակցութիւն կը պահանջեն»:

ԱՆՂՆԱԴԱՐՁ

ՄԷՈՒՏԱԿԱՆ ՆԱԽԱՃԵՌՆՈՒԹԻՒՆ. «ՉԵՆՔ ԿՐՆԱՐ ՄԵՐ ՊԱՏԵԱՆԻՆ ՄԷՋ ԱՎՐԻԼ ՄԻԱՅՆ»

Արաբական ծոցի տարածաշրջանին մէջ ՄԷՈՒՏԱԿԱՆ Արաբիան կը նկատուի այն եօթը երկիրներէն մէկը, որ Աստուածաշունչի մեր ընկերութեան աշխատանքային իմ պատասխանատուութեան ծիրին մէջ կ'իյնայ: Բայց նկատի ունենալով, որ երկիրը «գոց» է քրիստոնէական ներկայութեան համար, կարելի չէ եղած հոն այցելել աշխատանքային իմ երկար տարիներուս ընթացքին:

Հաւանաբար պէտք էր սպասել պատեհ օրուան եւ առիթին:

ԵՈՒՆԵՍԲՕ-ն, որ Միացեալ ազգերու կազմակերպութեան կրթական-գիտական եւ մշակութային հիմնարկ-յան ձևաժողովն է, կազմակերպած էր իր եօթներորդ համախմբումը 3-4 մայիս 2017-ին, իսկ վայրը որոշած էր Ռիատ՝ ՄԷՈՒՏԱԿԱՆ Արաբիոյ մայրաքաղաքը: Եւ նկատի ունենալով, որ Աստուածաշունչի ընկերութեան մեր կեդրոնական գրասենեակը անդամ է ԵՈՒՆԵՍԲՕ-ի, ստացած էր հրաւեր՝ մասնակցելու այս ժողովին: Այդ հրաւերին ընդառաջելը վստահուեցաւ ինձի՝ ներկայացնելու մեր կազմակերպութիւնը այս «գոց» երկրին մէջ:

ԵՈՒՆԵՍԲՕ-ն իր այս տարեկան ժողովը կեդրոնացուցած էր երիտասարդական մտահոգութիւններու եւ ներկայի ընկերային-քաղաքական կեանքին մէջ անոնց դերին ու ներդրումին վրայ:

Բայց նախ պէտք էր մուտքի արտօնագիրը, ուր կար իմ անունս եւ անունը այն կազմակերպութեան, զոր պիտի ներկայացնէի: Եւ իմ պարագայիս՝ Աստուածաշունչի ընկերութիւնը:

Եւ «մտմտուքը» սկսաւ մէջս, թէ ինչպէ՛ս պէտք էր պատասխանելի գործիս բովանդակութիւնը եւ անոր պարունակութիւնը պարզաբանելու վերաբերող հարցումին, զոր պիտի ուղղուէր դեսպանատան կողմէ՝ արտօնագիրը (չ)շնորհելէ առաջ:

Բայց պէտք է հաւատալ ու ակնկալել, որ կրնայ պատահիլ անսպասելին. այդպէս ալ եղաւ, մուտքի արտօնագիրը անցագիրիս մէջ զետեղուեցաւ առանց հարց ու փորձի: Եթէ առաջին «քննութենէն» ձեւով մը անցած էի, բայց տակաւին կար երկրորդը՝ օղակայանը:

Պաշտօնէային դէմքին վրայ ուրուագծուեցաւ ժպիտ: Մայրիներու մեր երկիրը ունի յատուկ ջերմութիւն մը՝ Արաբական ծոցի երկիրներուն համար: Ունեցանք «հաճելի» զրոյց, մինչ պաշտօնէան կը կատարէր կարգ մը սովորական ստուգումները: Եւ «հաճելի»

գրոյցներն ալ արաբական օդակայաններուն եւ անոնց մշակոյթին մէկ մասն են: Այլ օդակայաններու մէջ նման երեւոյթի յաճախ չես հանդիպիր:

Համագումարին սկսայ մասնակցիլ աւելի հանգիստ եւ ինքնավստահ: Վերջապէս մուտք գործած էի «գոց» երկիրը, այդ ալ՝ պաշտօնական հանգամանքով: Ուզեցի տեսնել, թէ ի՛նչն է իւրայատուկը այս երկրին:

Համաժողովին կը մասնակցէին աւելի քան 1500 ներկայացուցիչներ՝ 350 կազմակերպութիւններէ: Բաւական մեծ թիւով ներկայացուցիչներ՝ նաեւ Սէուտական Արաբիայէն, կարեւոր մասը՝ երիտասարդներ: Ժամանակս ու հանդիպումները առաւելաբար կեդրոնացուցի տեղացի սէուտցիներուն հետ տեսակցելով: Վերջապէս, կ'ուզէի զգալ տեղական «բազկերակը», որպէսզի գիտնայի եւ հասկնայի, թէ ի՛նչ էր այդ «գոց»-ը:

Եւ իւրաքանչիւր երիտասարդ սէուտցիի հետ հանդիպումին սկսաւ քիչ մը աւելի «բացուիլ» ինծի համար «գոց» նկատուող այդ երկիրը: Սկսած էի տեսնել երիտասարդութիւն մը, որ ուսեալ եւ զարգացած է, տիրապետած է մէկ կամ երկու օտար լեզուներու, ստացած է համալսարանական բարձրագոյն վկայականներ, եւ որ կը խօսին հանգիստ եւ առանց քաշքշուքի: Իրենց երկրին նկատմամբ տածած անոնց սերը՝ մշակոյթի պահպանումը, բայց նաեւ օտարին՝ «ուրիշին» նկատմամբ բացուելու անհրաժեշտութիւնը կարեւոր գրաւական էր բոլորին համար: Եւ իւրաքանչիւր երիտասարդի հետ հանդիպումին կար հիմնական մտահոգութիւնը՝ «կարելի չէ մեր պատեանին մէջ միայն ապրիլ այլեւս»: Կը զգայի, որ անոնք կ'ուզէին տեսնել, բայց նաեւ ընդունիլ անոնք, որոնք իրենցմէ չեն եւ իրենց պէս չեն, եւ որ՝ պէտք է ապրին «անոնց» հետ նաեւ...



Դոկտ. Նուրա Մանսուրի միջին տարիքի սէուտցի մտաւորական կին մըն է: Ան պատասխանատու պաշտօնի վրայ է սէուտական «Գափսարկ» գիտա-հետազօտական հիմնարկին մէջ: Խօսեցաւ «դրական» աշխարհին մասին, եւ թէ ինչպէ՛ս ներկայ օրերուն երիտասարդութիւնը պէտք ունի աւելի առողջ եւ նպատակասլաց կեանքի: «Պէտք չունինք հաւատալու, որ անցեալը միշտ աւելի լաւ է,- ըսաւ ան:- Այս դժուար եւ վտանգաւոր աշխարհին մէջ արժէ հաւատալ դաստիարակութեան, որ կ'օգնէ քեզի անդրադառնալու, թէ ինչո՛ւ կ'ապրիս այս աշխարհին մէջ»:

Դասախօսութենէն ետք մօտեցայ անոր: Թէեւ զգուշ էի ձեռքս երկարելու եւ բարեւելու, բայց արդէն ան զիս կանխեց եւ ձեռքը երկարեց, ու արդէն ընթացք առաւ մեր գրոյցը:

Երբ Նուրային կը փորձէի ներկայացնել Աստուածաշունչը եւ անոր կրօնական-մշակութային արժեքները, ան յայտնեց իր հիացմունքը: «Աստուածաշունչը կարդացած եմ, երբ Ամերիկա էի՝ իբրեւ ուսանող: Աստուածաշունչին մէջ կան բարձր արժեքներ, որոնց հանդէպ ունիմ յարգանք եւ սքանչացում»:

Նուրային դէմքին վրայ կար ինքնավստահութիւն, ան շատ հանգիստ կերպով դրսեւորեց իր կեցուածքը՝ գիտնալով հանդերձ, որ տարբեր կրօնի եւ մշակոյթի կը պատկանէինք: «Կրօնը ճիշդ պարունակով եւ բովանդակութեամբ պէտք է սորվեցնել,- ըսաւ ան:- Մեր՝ իսլամներու հարցն ալ այս է ներկայ օրերուն: Եւ մեր՝ իսլամներու ներքին միջյարանուանական տագնապն ու, տակաւին, արտաքին աշխարհին հետ դժուարութիւնը կը ծագի, քանի ճիշդ ձեւով չէ, որ կ'ուսուցանենք մեր հաւատամքները»:

Նուրան մեր երկխօսութեան ընդմէջէն կը փորձէր ինք ալ «իր պատեանէն դուրս գալ»: Եւ Նուրային համար «դուրս գալը» սկսաւ ինքնիր անձէն: Եթէ անդրադարձած էր իր իրավիճակին, իր ինքնութեան, բայց նաեւ «դուրս գալով»՝ կը փորձէր հասկնալ նաեւ զիս եւ իմ ինքնութիւնս, կրօնս ու պատկանելիութիւնս:

Ռեիատի օղակայանէն կը պատրաստուիմ վերադառնալ: Գալու ատեն «մտահոգութեամբ» մտայ նոյն օղակայանը, բայց հիմա դուրս կու գամ աւելի խաղաղ: «Խաղաղ», որովհետեւ հանդիպեցայ մարդոց, որոնք կը տեսնէին, թէ՛ «կարելի չէ միայն իրենց պատեանին մէջ ապրիլ»: Անոնք կը փորձէին դուրս գալ իրենց անձերէն՝ ճեղքելով «պատերը», որպէսզի տեսնեն «ուրիշը»:

Եւ արժէ նայիլ ներկայ օրերու աշխարհին:

Եթէ այսօր կան մարդիկ, որոնք կը փորձեն «պատեր» հիւսել իրենց եւ իրենց երկիրներուն համար, երեւի՝ իրենց ապահովութեա՞ն եւ բարօրութեա՞ն համար: Բայց կան նաեւ անոնք, որոնք պատերը կը քանդեն, որովհետեւ՝ «չեն ուզեր իրենց պատեանին մէջ միայն մնալ»: Եւ երեւի կը փորձեն ու կ'ուզեն տեսնել, թէ իրենց ապահովութիւնը նաեւ կախեալ է «ուրիշին» ապահովութենէն:

Մեռտական Արաբիոյ նախաձեռնութիւնը մէկ լաւ օրինակ-փորձառութիւնն էր, որ ապրեցայ եւ հասկցայ, որ կարելի է «ուրիշը» հասկնալ, եթէ փորձես «քու պատեանիդ մէջ չմնալ»:

Եւ եթէ «դրական աշխարհ» մը շինելու ջատագովը պիտի ըլլալ, այդ մէկը ունի իր նախապայմանը:

Թէ՛ «կարելի չէ քու պատեանիդ մէջ միայն մնալ»:

ԴՈԿՏ. ՀՐԱՅՐ ԸԷՊԷՃԵԱՆ

ԱԿՆԱՐԿ

Պատճառները, Որոնք Թոյլ Չեն Տար Այլևս Անանուն Ըլլալու

Այսօրուան աշխուժ, գերարագ եւ լայնատարած հաղորդակցութեան աշխարհին մէջ հետզհետէ աւելի եւ աւելի դժուար կը դառնայ ունէ անձի համար իր մտերմիկ առանձնութիւնը պահպանելը: Արդեօ՞ք այժմ ժամանակն է ընդհանրապէս հրաժարելու այդ գաղափարէն:



Երեւակայ՛, որ կը մտնես անձանօթներով լեցուն սենեակ մը: Թերեւս ճամբորդած ես նոր քաղաք մը: Ոչ ոք կը ճանչնաս, եւ ոչ ոք քեզ կը ճանչնայ: Ազատ ես ընելու այն, ինչ որ կ'ուզես, կամ՝ որեւէ տեղ երթալու, կամ՝ խօսելու մէկու մը հետ: Ի՞նչ կը զգաս:

Թերեւս ձերբազատած կը զգաս ազգականներու կամ բարեկամներու դատողութենէն եւ նկատողութիւններէն: Թերեւս աշխուժ կը զգաս՝ այս առիթը ըմբռնելու, կեանքը ապրելու համար քո՛ւ ուզած ձեւովդ, քո՛ւ արագութեամբդ: Բայց ինչ որ ալ ըլլան քու զգացումներդ, դուն կրնաս ապահով կերպով ենթադրել, որ կրնաս մտնել այս մեկուսացած

կացութեան մէջ, առանց հեռաւոր հաւաքականութեան կամ անձի մը հսկողութեան կամ հետապնդումին: Ճի՞շդ է:

Միտա՛: Այդ սենեակը երբ մտնես, կը կարծես, թէ անանուն մէկն էս: Ընկերամշակութային երեւոյթ մը, որ կ'ապահովէ մտերմիկ առանձնութիւն եւ ազատութիւն: Բայց 2017 թուականին ատիկա գրեթէ մեռած է: Մեր դարու ամէնէն հիմնական մարտահրաւերներէն մէկն այն է, թէ ինչպէ՛ս կրնանք ապահովել ազգային անվտանգութիւնը եւ մեր կեանքերը բարելաւել արհեստագիտութեան միջոցով, նոյն ժամանակ՝ պահպանելով առանձնութեան հիմնական իրաւունքը, որ կը թուի, թէ գոյութիւն ունեցած է մարդկութեան պատմութեան սկիզբէն: Սակայն բազմաթիւ միջոցներով իրարու կապուած մեր թուայնացած մարդկային ընկերութեան մէջ գրեթէ անկարելի է անանուն մնալը:

Համացանցը Մեզ Դադրեցուց Հոգ Ընելէ

Անանուն, անկայտ մնալը մարդկային իւրայատուկ փորձառութիւն մըն է: Ատիկա այն գաղափարն է, որ մենք բոլորս ունինք աշխարհին ներկայացնելիք ինքնութիւններ, բայց որոշ պարագաներու բերումով կրնանք անջատել, քողարկել այդ ինքնութիւնը եւ գործել բացարձակ գաղտնիութեան մէջ:

«Մենք կարիքը ունինք հանրային ինքնութեան՝ նաւարկելու համար ընտանիքի, բարեկամներու, գործընկերներու, մեր նմաններու ընկերային աշխարհին մէջ: Բայց մենք նոյնպէս կարիքը ունինք առանձին, մտերմիկ ինքնութեան, ներքին տարածութեան մը, ուր անկախ արտաքին ազդեցութիւններէ՝ մենք կրնանք առանձին մնալ մեր մտածումներուն եւ զգացումներուն հետ, ըլլալ՝ մեր հոգեկան աշխարհին հետ: Մեր ինքնութիւնը երկուքին խառնուրդով կազմուած է: Առանց մէկուն, կամ միւսին, մեր բարօրութիւնը դիւրաւ կը խանգարուի», կ'ըսէ Նիւ Ճըրզիի Ռայտըր համալսարանի հոգեբանութեան դասախօս, «Մայքրոյճի օֆ սիպերըսփէյս» գիրքի հեղինակ Ճոն Միւլըր:

Անանուն ըլլալը մեզի թոյլ կու տայ փորձել նորութիւններ կամ արտայայտել միտքեր՝ առանց քննադատուելու: Փենսիլվանիոյ Քառնեկի Մելոն համալսարանէն հետազօտողներ հրատարակեցին ուսումնասիրութիւն մը, որուն մէջ կատարեցին մանրակրկիտ հարցազրոյցներ՝ 4 ցամաքամասներէ տասնեակ մը համացանց օգտագործողներու հետ: Օրինակ, մասնակից մը ստեղծած է անանուն առցանց համայնք մը՝ անգլերէն սորվողներու համար, որպէսզի գործնականի վերածեն իրենց լեզուական հմտութիւնները: Անանուն մնալը իրենց օգնած է աւելի լաւ դասաւորելու իրենց կեանքի որոշ

ասպարեզները: Այլ մասնակից մը ըսաւ, որ ինք յաճախ կը յառաջացնէ հաղորդագիրներու էջ մը (message board)՝ օգնելու համար մարդոց լուծելու իրենց թեքնիք հարցերը, բայց կը ցանկայ մերժել անբաղձալի յանձնառութիւններ, համացանցի անջատուած բնոյթին պատճառով:

Աւելի՛ն. համացանցի նման միջավայրի մը մէջ անանուն մնալը կրնայ օգնել ապահով պահելու անձնական անվտանգութիւնը:

«Մեր արդիւնքները ցոյց կու տան, որ տարբեր տարիքի մարդիկ երբեմն իրաւունք ունին անանուն մնալու», կը գրեն հետազօտողները 44 հարցազրոյցներ վարելէ ետք:

Բայց, ըստ այլ հետազօտական կեդրոնի մը, մինչ համացանցը օգտագործողներուն մեծ մասը կ'ուզէ անանուն մնալ, սակայն անոնց մեծ մասը չի կարծեր, որ ասիկա ամբողջովին կարելի է: Ուսումնասիրութիւնը ցոյց կու տայ, որ ամերիկացի համացանց օգտագործողներուն 59 առ հարիւրը կը հաւատայ, որ անկարելի է ամբողջովին ինքնութիւնդ առցանց գաղտնի պահել:

Մինչ կարգ մը մարդիկ կ'առնեն հիմնական քայլեր, որպէսզի անանուն մնան՝ համակարգիչին մէջ ջնջելով փնտռութիւն պատմութիւնը (browsing history), բազմաթիւ օգտագործողներ, որոնք կ'ըսեն, թէ կ'ուզեն անանուն մնալ, այս քայլը չեն առներ:

Այս տարուան սկիզբը հրապարակուած ուսումնասիրութեան մը արդիւնքը բացայայտեց «մտերմիկ առանձնութեան յարակարծութիւն» (Privacy Paradox) կոչուածը. գաղափարը, որ մինչ մարդիկ կ'արժեւորեն առանձնութիւնը, սակայն գործնականին մէջ ասիկա պահպանելու համար գրեթէ ոչինչ կ'ընեն:

Մտածեցէ՛ք ատոր մասին. վերջին անգամ ե՞րբ կարդացիք այդ բազմաթիւ եւ երկար առանձնութեան քաղաքականութեան թարմացումները՝ նախքան «համաձայն եմ»-ը հաստատելը: Առանձնութեան հանդէպ մեր վերաբերմունքը հետզհետէ աւելի անտարբեր եղած է:

Նոյնիսկ ոմանք կը պնդեն, որ նոյնիսկ վնասակար է քանի մը տեղեկութիւններ չհրապարակելը:

Աշխարհի տարածքին ասպարեզներու խորհրդատուներ կը շեփոքահարեն արհեստավարժ անհրաժեշտութիւնը ունենալու բացայայտ հանրային ԼինքըտԻն նկար ամբողջական անունով, բոլոր մանրամասնութիւններով, աշխատանքի ամբողջական պատմութեամբ եւ աւելի...

Թերեւս ասիկա աւելի շատ մշակութային մեղմացում է՝ նախկին կաշկանդուած, ջղային վերաբերմունքի նկատմամբ:

Ես կը յիշեմ առաջին անգամ համացանցը օգտագործելու: 1990-ական թուականներուն էր, իմ հօրս համակարգիչին վրայ: Այդ օրերուն համացանցի ծառայութիւն հայթայթողները շատ հեռու կ'երթային, ծայրայեղական աստիճանի, օգտագործողները համոզելով, որ չհրապարակեն նոյնիսկ տարրական տուեալներ իրենց հանրային դիմագիծներէն՝ անուն, քաղաք, նոյնիսկ սեռ, ազգային պատկանելութիւն:

Այսօ՞ր: Անձնական տեղեկութիւնները ազատօրէն կը շրջագային ամբողջ ցանցին մէջ, յաճախ՝ մեր կամքով. Ինսթակրամի մէջ հրապարակուած մեր եւ մեր սիրելիներուն ինքնանկարները (սելֆի), ամբողջացած՝ աշխարհագրական վայրի նկարներով: Ընկերային լրատու ցանցեր օգտագործողներ, որոնք մասնակից կը դառնան քաղաքական կռուրտութի, ցեխարձակումներու եւ վիրատրանքներու, հակառակ այն իրողութեան, որ իրենց յարձակումներուն թիրախը կրնայ դիւրաւ գիտնալ իրենց անուններն ու իսկական ինքնութիւնը:

«Մարդիկ հակում ունին կարծելու, թէ համացանցային տարածքը տեսակ մը երեւակայական տարածք է, առանց իսկական սահմաններու, տարածք մը, որ շատ լուրջի պէտք չէ առնել, եւ որ՝ ենթակայ չէ «իրական» աշխարհի օրէնքներուն եւ չափանիշներուն», կ'ըսէ Միլըր:

Ընդամենը քանի մը տարիներու ընթացքին համացանցին հետ ժողովուրդին յարմարաւետութեան մակարդակը բարձրացած է հասած է այն կէտին, ուր տեղեկատուութեան փոխանակումը կրնայ ըլլալ անփոյթ, կամ անխոհեմ:

Անուանեցէ՛ք ատիկա մտերմիկ առանձնութեան յոգնութիւն, բայց մեր արհեստագիտական սարքերէն (բջիջային, համակարգիչ եւ այլն) եւ ընկերային ցանցերէն մեր աճող կախումաւորութիւնը մեզմէ ոմանց տուած է ծոյլ վերաբերում՝ ամբողջովին անանուն մնալու հանդէպ:

Բայց ի՞նչ կը պատահի, եթէ դուն մէկն ես այն մարդոցմէ, որոնք կը զգուշանան, կը խուսափին Ֆէյսպուքէն, ընկերային ցանցի մէջ ներկայութիւն չունի, եւ ծայրայեղութեան կ'երթայ թուայնացած հետք ձգելու մէջ: Ներեցէ՛ք, ձեր անանուն մնալը եւս վտանգուած է:

Ցանցէն Դուրս Գալը Ամբանալ ՉԷ

Մինչ Ֆէյսպուքը շրջանցելը լաւ միջոց մըն է անջատուելու, սակայն տակաւին կան միջոցներ, որոնցմով մարդիկ կրնան հետախուզել ձեր ինքնութիւնը:

Փոլ Օհմ՝ Ուաշինկթօնի Ճորճթաուն համալսարանի իրաւաբանութեան դասախօս, կ'ըսէ, որ կայ «միջազգային անանունութիւն» եւ «մակարեքական անանունութիւն». առաջինը մեր ընտրածն է՝ ապահով ըլլալու, երկրորդը կը վերաբերի տուեալներուն, որոնց միջոցով Կուկըլ խուզարկելով՝ ձեր մասին կրնայ առցանց «եզրակացնել», այսինքն միայն տուեալ մը օգտագործելով՝ անձնական տեղեկութիւններու կոյտ մը կը կազմէ ձեր մասին:

Արհեստագիտական սարքերէն (բջիջային, համակարգիչ եւ այլն) եւ ընկերային ցանցերէն մեր աճող կախումաւորութիւնը, կը մաշեցնէ մեր անանուն մնալը: Եթէ նոյնիսկ դուք ընկերային ցանցեր չէք օգտագործեր, ծանուցողներ կրնան ձեր առցանց հետքերը գտնել:

2017-ին ամբողջովին անանուն ըլլալու մասին խօսելով՝ Օհմ կ'ըսէ. «Հետզհետէ աւելի յստակ կը դառնայ, որ ատիկա պարտուելու խաղ է: Մինչեւ այն ատեն որ մէկը բան մը գիտէ ձեր մասին, անոնք հաւանաբար նաեւ այլ բաներ պիտի գտնեն ձեր մասին, եւ ատիկա՝ անցեալէն աւելի յաջող ընելով»:

Եթէ դուք ընկերային ցանցի մէջ աշխուժ էք, ատիկա կրնայ նշանակել հին բոցեր, կամ երկար ատենէ ձեր կորսնցուցած դասընկերները չեն կրնար գտնել ձեր հետքը: Բայց ատիկա չի նշանակեր, որ դուք անանուն մնացած էք խոշոր ընկերութիւններու, կառոյցներու, կամ կառավարութեան համար:

«Այժմ շատ աւելի դժուար է ըլլալ անանուն, քան ատիկա եղած է 20 տարի առաջ», կ'ըսէ Փիթըր Սուայր՝ իրաւաբանութեան դասախօս, որ Միացեալ Նահանգներու նախկին նախագահ Պարաք Օպամայի խորհրդականներէն եղած է:

Ծանուցումի ասպարէզի մարդիկը ձեր համացանցային սովորութիւնները կը յայտնաբերեն ձեր սարքերուն (բջիջային, թապլէթ եւ լափթոփ) միջոցով՝ գիտնալով սովորաբար ձեր գտնուած վայրերը, գնումներու շուկաները, օգտագործած կայքերը, եւ աճող տարակարծութիւններ կան այն մասին, թէ համացանցի ընկերութիւններուն պէ՞տք է արտօնուի հետեւելու եւ վաճառելու երրորդ անձերու:

Այս տարեսկիզբին Միացեալ Նահանգներու նախագահ Տանըլտ Թրամփ ստորագրեց օրէնք մը, որ կը ջնջէ համացանցային ընկերութիւններու պարտադրուած պահանջները՝ արտօնութիւն ստանալու յաճախորդներէն, նախքան անոնց անձնական տուեալները (նոյնպէս օգտագործած սարքերն ու կայքերը) մատչելի դարձնելը:

Սուայր կ'ըսէ, որ մենք կ'ապրինք «հսկողութեան ոսկեդարուն մէջ»: Եթէ դուք հետաքննուող անձ մըն էք, ձեր մասին դրամական եւ այլ տուեալներ, ձեր օգտագործած կայքերը յայտնաբերելը շատ դիւրին է: Եւ ատիկա կ'ակնարկէ աւելի մեծ, լուրջ առանձնութեան, գաղտնիութեան մտահոգիչ խախտումներու՝ համացանցային անվտանգութեան եւ թուայնացած ծառայութիւններու, որոնք կը պահեն ձեր դրամատնային տուեալները, հաշիւները եւ տան հասցէները:

Այս օրերուն դժուար է անյայտ մնալը:

Աւելին կա՞յ:

Օհմ կ'ըսէ. «Մենք կը մօտենանք ծանուցումի յաջորդ խոշոր սահմանին. ձեր գտնուած վայրին»:

Անշուշտ կայքերը կրնան ոչ մէկ ծանուցում արտօնել ձեր հետաքրքրութիւններու հիման վրայ համացանցին մէջ ձեր այցելած վայրերուն վրայ: Բայց ընկերութիւնները եւ ծանուցողները, որոնք կը հետապնդեն ճարտարագիտական եւ առեւտրական գործարքներ, կրնան գտնել ձեր այցելած ճշգրիտ կայքը եւ նոյն պահուն ծանուցում հրապարակել հոն: Օրինակ, ծանուցումը կրնայ առկայծիլ ձեր բջջային հեռաձայնի պաստառին վրայ՝ ձեզի ներկայացնելով սակերը վաճառատան մը, որ կը գտնուի ձեզմէ մէկ քիլոմէթր հեռաւորութեան վրայ:

Գործնականօրէն անկարելի է ապրիլ ամբողջովին առանց համացանցի կամ հաղորդակցութեան որեւէ սարքի:

«Այժմ վատ ժամանակ է լրտես ըլլալը », կ'ըսէ Սուայր:

Այլ խօսքով, նոյնիսկ այն մարդոց համար, որոնց գործը պէտք է ըլլայ անանուն, դժուար է անանուն մնալ:

Այդուհանդերձ, կան բազմաթիւ դէպքեր, որոնց անանուն մնալը ինտրայարոյց է, նոյնիսկ՝ վտանգաւոր: Արդեօ՞ք ատոր մահը իրականութեան մէջ օրինութիւն է հանրութեան համար:



Վերջին ուսումնասիրութիւններու արդիւնքները ցոյց կու տան, որ բազմաթիւ մարդոց հոգը չէ համացանցային որոշ մակարդակի գաղտնիութեան գոհաբերումը՝ առցանց հսկողութեամբ պայքարելու համար ահաբեկչութեան դէմ:

Անանունութեան Վախճանը Լա՞ւ է

Սուայր կ'ըսէ, որ անանունութիւնը յարաբերաբար նոր կառոյց է, եւ թէ՛ քաղաքներու աճը ատիկա զարգացուց: Ուրեմն մենք առանց ատոր ապրելու աւելի շատ ժամանակ սպառած ենք, քան՝ ատոր հետ ապրելու:

«Անանունութիւնը գոյութիւն չէ ունեցած հին ժամանակներուն մէջ, երբ ամէն ոք գիտէր միւսին գործը: Որոշ չափով քաղաքային կենցաղը ստեղծած է անանունութիւնը: Տարբերութիւնը այսօր այն է, որ նոյնիսկ մեծ քաղաքի մը մէջ, մեզմէ իւրաքանչիւրը կը ձգէ հացի պատառներ, հետքեր, որոնց հետախոյզ մը կրնայ հետեւիլ», կ'ըսէ Սուայր:

Ամէն պարագայի, ամբողջովին անանուն մնալու մեր գործունէութիւնը առաւել կամ նուազ չափով անպտուղ է: Համացանցին մէջ նոր զարգացումներու աճը, աւելի եւ աւելի սարքերու առօրեայ օգտագործումը, մեր անձնական տուեալները գործուն պիտի դարձնեն, եւ ատոնք աւելի պիտի համարկուին մեր կեանքերուն:

«Այս մեծ անջատումը կայ: Արդեօ՞ք մենք կը հաւատանք, հարցազրոյցի մը ատեն առանձնութեան մասին հարցումին մարդոց տուած պատասխաններուն, թէ համացանցին մէջ անոնց ունեցած սովորութիւններուն»:

Պատրաստեց՝ **ՆԱՐԷ ԳԱԼԵՄՔԷՐԵԱՆ**
Օգտագործուած աղբիւր՝
«Պի.Պի.Սի.»

ԼՈՒՐԵՐ ԳԱՂՈՒԹՆԵՐԷՆ

Հայաստանի Անկախության 99-ամեակի Նշում

* Կազմակերպութեամբ Համազգային «Լ. Շանթ» մասնաճիւղի վարչութեան, 26 մայիսին Դամասկոսի «Ամինեան» սրահին մէջ նշուեցաւ Հայաստանի անկախութեան 99-ամեակը:

Քարի գալուստի խօսքը արտասանեց Մարալ Գաթըքլեան, որ հրաւիրեց ներկաները մէկ վայրկեան յոտնկայս յարգելու Հայաստանի եւ Սուրիոյ նահատակներուն յիշատակը:

Վարչութեան խօսքը արտասանեց Շողիկ Մարգիսեան, որ անդրադարձաւ մայիսեան պատգամներուն:

Հայաստանի դեսպան դոկտ. Արշակ Փոլատեան իր ելոյթին մէջ անդրադարձաւ անկախութեան խորհուրդին:

Օրուան բանախօսն էր Համազգայինի Կեդրոնական վարչութեան անդամ Կարօ Մանճիկեան, որ անդրադարձաւ մայիս 28-ի խորհուրդին եւ անկախութեան արժէքին:

Ձեռնարկի ընթացքին գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր: Յայտնենք, որ «Ամինեան» սրահի շրջափակին մէջ տօնակատարութեան իր մասնակցութիւնը բերաւ ՀՄԸՄ -ի շէփորախումբը:

* 28 մայիսին Նոր Գիւղի Քարէն Եփփէ Ազգային Ճեմարանի շրջափակէն ներս նշուեցաւ Հայաստանի անկախութեան 99-ամեակը:

ՄԵՄ-ի Կեդրոնական վարչութեան անդամ Ալիս Մելքոնեան արաբերէն լեզուով իր արտասանած բացման խօսքին մէջ ըսաւ, որ հայ ժողովուրդը իր սեփական ուժին վստահելով՝ 1918-ին հերոսամարտեր մղեց ու իր երկրի սահմաններէն դուրս քշեց թշնամին, որ այսօր կը փորձէ թափանցել Սուրիա, սակայն իր դէմ կը գտնէ Սուրիոյ քաջարի բանակն ու ժողովուրդը:

ՄԵՄ-ի Կեդրոնական վարչութեան ատենապետ Քրիստափոր Հապոյեան հայերէն լեզուով արտասանած իր խօսքին մէջ շեշտեց, 28 մայիս 1918-ին հայութիւնը իր անկախութիւնը կերտեց իբրեւ ազգային մէկ միաւոր, մէկ ուժ ու կամք: Անդրադառնալով սուրիական տագնապին՝ ան հաստատեց, որ դար մը առաջ մենք ապրելով՝ յաղթեցինք թուրքին, այսօր, դար մը վերջ, սուրիական հայրենիքը եւս պիտի յաղթէ նոյն ոտիսին: Ան նկատել տուաւ, որ հայ ժողովուրդը սուղ գին վճարեց հայրենակերտումին, ձեռք բերուած անկախութեան պահպանումին եւ հզօրացումին համար, այսօր ալ նոյնը կը պահանջուի, որուն համար պէտք է զօրակոչի ենթարկել Հայաստանի, Արցախի եւ սփիւռքի մեր ժողովուրդը՝ եռաթեւ միասնականութեամբ:



Այնուհետեւ գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր:

Օրուան եզրափակիչ պատգամը տուաւ Բերիոյ հայոց թեմի առաջնորդ Շահան արք. Սարգիսեան, որ հաստատեց, թէ 28 մայիսը հիմնարկէքն է հայոց անկախ պետականութեան եւ ցեղասպանութեամբ չմահացող ու մահուան յաղթանակով դիմակայող հայ ժողովուրդի վերականգնումի թուականն է:

Հանդիսութեան իրենց մասնակցութիւնը բերին հայրենի արուեստագէտներ Մկրտիչ Մկրտիչեան եւ Արսէն Գրիգորեան, որոնք մեկնաբանեցին ազգային, յեղափոխական եւ ազգագրական երգերու փունջ մը:

Այս առիթով հայրենի երգիչները պարգեատրուեցան Արամեան ընտանիքին եւ ՍԵՄի Կեդրոնական վարչութեան կողմէ:

26 մայիսին Թեհրանի Հայ առաքելական եկեղեցիներուն մէջ մատուցուեցաւ Հանրապետական մաղթանք, ապա հոգեհանգստեան արարողութիւն՝ 1918-ին նահատակուած հայազգի մարտիկներու յիշատակին:

Թեհրանի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ պատարագը մատուցեց Թեհրանի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ Մակար եպս. Աշգարեան, որ իր քարոզին մէջ անդրադարձաւ մայիս ամսուան յաղթանակներուն եւ հոգեւոր տօներուն: Ան Քրիստոսի համբարձման ու յարութեան տօներուն եւ հայ ժողովուրդի կեանքին միջեւ համեմատական եզրեր դրաւ, որ Հայոց ցեղասպանութենէն ետք յարութիւն առաւ: Ան կարեւորութեամբ անդրադարձաւ հայ ժողովուրդի աննկուն կամքին, հաւատքին եւ արժէքներուն տէր կանգնելու առկայութեան եւ դրսեւորման անհրաժեշտութիւնը 28 մայիսին հայ ժողովուրդի պայքարը յաղթանակով պսակելու գործին մէջ, աւելցնելով, որ այդ միասնական ոգին դարձեալ ի յայտ եկաւ 2016-ի ապրիլեան քառօրեայ պատերազմի ժամանակ:

ԱՏՐՊԱՏԱԿԱՆ

28 մայիսին, Թաւրիզի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ մատուցուեցաւ Ս. պատարագ եւ կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն: Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ Գրիգոր եպս. Չիֆթճեան իր քարոզին մէջ վեր առաւ մեր հայրենիքի անկախութեան եւ մեր ժողովուրդի ինքնորոշման իրաւունքի սրբազան գաղափարները՝ անդրադառնալով 1918 թուականին Հայ յեղափոխական դաշնակցութեան վճռական որոշումով ստեղծուած Հայաստանի առաջին անկախութեան 99-րդ տարեդարձի ոգեշնչող օրուան խորհուրդին:



Առաջնորդ Սրբազան Հօր Եռօրեայ Այցելութիւնը Սուրիոյ Ծովափնեայ Շրջան

Բերիոյ հայոց թեմի առաջնորդ Շահան արք. Սարգիսեան յաճախ կ'այցելէ Բերիոյ հայոց թեմի զանազան շրջաններ, մանաւանդ՝ վերջին տարիներուն երկրին մէջ ստեղծուած պատերազմական իրավիճակին պատճառով տեղափոխուած հայորդիներուն, որոնք ապաստան ընտրած են համեմատաբար աւելի ապահով քաղաքներ:

Արդարեւ, 24 մայիսին ան այցելեց Քեսապ, ուր հանդիպում ունեցաւ շրջանի պատասխանատուներուն, ինչպէս նաեւ թաղականութեան եւ հոգաբարձական կազմերուն հետ եւ, լսելէ ետք անոնց մտահոգութիւնները, իր հայրական ցուցմունքները տալով, գնահատեց անոնց աշխատանքը՝ թելադրելով, որ աւելի աշխուժ եւ վերանորոգ թափով շարունակեն իրենց առաքելութիւնը:

* 25 մայիսին, Համբարձման տօնին առիթով, Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ մատուցուեցաւ Ս. պատարագ, որուն նախագահեց սրբազան հայրը եւ յղեց իր պատգամը: Այնուհետեւ սրբազան հայրը ներկայ գտնուեցաւ ՍՕԽ-ի Քեսապի «Մեղրի» մասնաճիւղի Համբարձման տօնին առիթով կազմակերպած ձեռ-նարկին, նաեւ այցելեց ՍՕԽ-ի Կազդորման կայան եւ մօտէն հետապնդեց կեդրոնի վերանորոգութեան աշխատանքները:

* 26 մայիսին առաջնորդ սրբազանը այցելեց Թարթուս, ուր ներկայ գտնուեցաւ Ս. Դանիէլ եկեղեցոյ մէջ մատուցուած պատարագին եւ տուաւ իր պատգամը: Պատարագի աւարտին եկեղեցոյ ներքնասրահին մէջ ան հանդիպում ունեցաւ ժողովուրդին հետ: Հանդիպման ընթացքին խօսք առաւ եկեղեցոյ հովիւ Տաթև Ա. քինյ. Միքայէլեանը, որ ողջունեց սրբազան հօր յաճախակի այցելութիւնը իր ժողովուրդին: Երգերով եւ արտասանութիւններով ելոյթ ունեցան Թարթուսի եւ շրջակայքի շաբաթօրեայ դպրոցի աշակերտները: Սրբազան հայրը



գնահատեց Թարթուսի համայնքին եւ շաբաթօրեայ դպրոցին մէջ տարուած աշխատանքները՝ յորդորելով ներկաները, որ շարունակեն ժողովուրդին ծառայելու նուիրական առաքելութիւնը: Հանդիպումի աւարտին սրբազան հայրը Թարթուսի եւ շրջակայքի մէջ համալսարանական ուսանողներուն նիւթական պարգէւ բաժնեց որպէս գնահատանք:

Նոյն օրը երեկոյեան առաջնորդ սրբազան հայրը ներկայ եղաւ Լաթաքիոյ Ազգ. Ս. Նահատակաց վարժարանի մանկապարտէզի վկայականաց բաշխման: Աւարտին սրբազան հայրը, շնորհաւորելէ ետք շրջանաւարտները եւ անոնց ծնողները, գնահատեց բոլոր անոնք, որոնք ներկայ պայմաններու մէջ հայ դպրոցը բաց կը պահեն, թելադրելով բոլորին, որ տէր կանգնին հայ դպրոցին եւ նոր սերունդին, որովհետեւ անոնք են մեր ապագան:

Այնուհետեւ «Գանձասար» սրահին մէջ կազմակերպուեցաւ պաշտօնական ընթրիք՝ ի պատիւ սրբազան հօր:

* 27 մայիսին սրբազան հայրը յաջորդաբար հանդիպում ունեցաւ Լաթաքիոյ Ս. Աստուածածին եկեղեցոյ թաղականութեան, Ազգ. Ս. Նահատակաց վարժարանի հոգաբարձութեան եւ ՄՇՕՎ

Եւ Կիրակնօրեայ դպրոցի ուսուցչական կազմերուն հետ եւ լսելէ ետք իւրաքանչիւրին աշխատանքին մասին, ան իր ցուցմունքները տուաւ եւ գնահատեց տարուած աշխատանքը:

Նոյն օրը, Երեկոյեան, սրբազան հայրը ներկայ եղաւ Լաթաքիոյ Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ կիրակնամուտքի ժամերգութեան, որուն աւարտին օծումը կատարեց Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին նուիրուած սրբապատկերի կրկնօրինակին, որ գծուած եւ նուիրուած էր Սիրան Աւընեան-Ամպարճեանին կողմէ, ինչպէս նաեւ ազատագրուած Ղնեմիէի Ս. Գեորգ եկեղեցոյ գմբէթի խաչին: Արարողութեան աւարտին սրբազան հայրը փառք տուաւ Աստուծոյ, որ կարողութիւնը տուաւ, որ Ս. միւռնով օծումը կատարենք սրբապատկերին եւ խաչին:



Այնուհետեւ «Արարատ» սրահէն առաջնորդ սրբազան հայրը ներկայ գտնուեցաւ եւ նախագահեց Հայաստանի Ա. անկախութեան 99-ամեակի տօնակատարութեան:

Ս. Աստուածածին եկեղեցոյ հովիւ Տաթև Ա. քնյ. Միքայէլեանը ողջունեց առաջնորդ սրբազան հայրը իբրեւ քաջարի հովիւի, որ հակառակ երկրի աննպաստ պայմաններուն, վտանգներ շրջանցելով, յանձն կ'առնէ հասնիլ թեմի բոլոր շրջանները: Այնուհետեւ թաղականութեան ատենապետ Աւետիս Կարպուշեան Լաթաքիոյ հայութեան անունով արծաթեայ շղթայ մը նուիրեց սրբազան հօր:

Անդրադառնալով օրուան խորհուրդին սրբազան հայրը կարեւորեց 28 մայիս 1918-ը թուականը՝ հաստատելով, որ 99 տարի առաջ, ինչ որ իրագործուեցաւ Հայաստանի արեւելեան շրջանի հողատարածքին վրայ, մեր ժողովուրդին յաւիտենականութեան հիմնաքարն էր:

Ձեռնարկի ընթացքին գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր:

ՀՅԴ Բիւրոյի Ներկայացուցիչը Ծաղկեպսակ Զետեղեց Նահատակ Ռաֆֆի Պչաքճեանի Շիրիմին

Չորեքշաբթի, 8 Յունիսի առաւօտեան ժամը 10:00-ին, ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեան, Պատկան Մարմինի անդամներու եւ գաղափարակից ընկերներու հետ միասին այցելեց Հալէպի Ազգ. Գերեզմանատան մէջ գտնուող հայկական թաղերու պաշտպանութեան հրամանատար, նահատակ Ռաֆֆի Պչաքճեանի շիրիմը:



Տէր Զարեհ քնյ. Շաքարեանի աղօթքէն ետք, անոնք ծաղկեպսակ գետեղեցին եւ խունկ ու մոմ վառեցին հալէպահայ նահատակին շիրիմին առջեւ՝ առ ի յարգանք անոր անմեռ յիշատակին:

ԱՅԼԱԶԱՆ

Որո՞ւ կ'օգնեիք առաջին հերթին



Մեր ընտրությունը կրնայ շատ բան բացայայտել մեր մասին: Յաճախ ընտրության վրայ կ'ազդեն բնատրություն գիծերը, խառնուածքն ու անհատականությունը:

Ուշադիր նայեցեք նկարին եւ ըսեք, թե որո՞ւ կ'օգնեիք առաջին հերթին. ձեր պատասխանը կրնայ շատ բան բացայայտել ձեր մասին:

– 1 –

Եթե ընտրեցիք մեծ մայրիկը, դուք բարձր արժեքներու տեր մարդ էք, որ կը գնահատե՛ք պատմությունն ու անցեալի ասանդությունները:

Դուք երկար կը մտածեք, մինչեւ որեւէ քայլ առնելը եւ բաւական իրատես աչքով կը նայիք աշխարհին: Շնորհաւորելի են ձեզ դաստիարակող ծնողները:

– 2 –

Եթե ընտրեցիք կատուն, դուք շատ բարի մարդ էք: Բնութիւնն ու կենդանական աշխարհը կը գերադասեք մարդոցմէ: Բնութեան գիրկը ազատ ու հանգիստ կը զգաք: Դուք երազկոտ եւ անսովոր մարդ էք:

– 3 –

Եթե տղամարդը ընտրեցիք, դուք լուրջ եւ պատասխանատու մարդ էք: Շատ ընկերներ ունիք, որոնք կրնան միշտ ալ ձեր օգնութեան դիմել, իսկ դուք յուսախաբ չէք ըներ զանոնք: Աշխատանքէն չէք վախնար եւ նպատակասլաց անձ էք:

– 4 –

Եթե կինը ընտրեցիք, դուք չափազանց ծառայասէր մարդ էք եւ ուրիշներու օգնելէ հաճոյք կ'առնեք: Նաեւ կը սիրեք բոլորին ուշադրութեան կեդրոնը դառնալ եւ գնահատուիլ բոլորէն:

Գեղեցիկ Խօսիլ Սորվեցնել Երեխային

Գեղեցիկ եւ բարեհունչ խօսքը յաջողութեան հասնելու գրաւականներէն մէկն է: Այս



արուեստին պէտք է տիրապետել մանկութենէն: Երեխային պէտք է սորվեցնել գեղեցիկ խօսիլ շատ կանուխէն:

Ի՞նչպէս ընել.

– Առաջին հերթին, նախ դուք օրինակ պէտք է ծառայէք ձեր զակին՝ գեղեցիկ եւ ճիշդ խօսելով:

Աղաւաղուած լեզու մի՛ գործածէք, մի՛ արտաբերէք բառեր, զորս պիտի չուզէիք լսել ձեր զակին բերնէն: Յաճախ կարդացէ՛ք երեխային համար, սորվեցուցէք իր տարիքին համապատասխան բանաստեղծութիւններ:

– Ուշադիր լսեցէք ձեր երեխային, ի հարկին տեղոյն վրայ սրբագրեցէք անոր սխալները՝ պզտիկ բացատրութիւն մը տալով: Երեխան թող զգայ, որ զինք մտիկ ընող եւ խօսքերուն հետեւող կայ:

– Երեխային մղեցէք, որ կարդայ: Հոն է, որ երեխան պիտի ծանօթանայ գեղեցիկ խօսքի արուեստին:

– Գովեցէք ձեր երեխան՝ իր լաւ խօսքին համար: Անհրաժեշտ է, որ երեխան զգայ ծնողներուն աջակցութիւնը: Տեղին քաջալերեցէք եւ գովեցէք հետեւեալ խօսքերով.

* **Քեզի հետ խօսիլը շատ հաճելի է:**

* **Ի՞նչ լաւ կը խօսիս, հպարտ եմ քեզմով:**

– Երբեմն խաղի ձեւով ձայնագրեցէք ձեր երեխային խօսքը, յետոյ միասին մտիկ ըրէք եւ առիթ տուէք, որ գտնէ ու սրբագրէ իր լեզուական սխալները:

Ահաւասիկ՝ դիւրին միջոցներ, որոնք ժամանակի ընթացքին անկասկած արդիւնքի կը հասնին:



WWW.ARMENIANPRELACYKW.ORG